

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

Տպագրված է ընդամենը 5 օրինակ

ՕՐԻՆԱԿ

ԳՐԱՆՑՎԱԾ Է

«ԱԲՈՒԱ Քրեղիտ Ռեփորթինգ»

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

փակ բաժնետիրական ընկերության

ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ

Բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովում

ՌԵԳԻՍՏՐԻ ԿԵՆՏՐՈՆԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ

ԲԱԺՆԻ ԿՈՂՄԻՑ

12.04.2006թ.

21 դեկտեմբերի 2007թ.

գրանցման թիվ

286.120.06038

վկայական

03 Ա 071442

Արձանագրություն թիվ 21/12

Թիվ 003 փոփոխությունը գրանցված է
իրավաբանական անձանց պետական ռեգիստրի

Արաբկիրի տարածքային բաժնի կողմից

06. 02. 2008թ.

Տնօրեն՝

Թիվ 001-3 փոփոխությունը գրանցված է

իրավաբանական անձանց պետական ռեգիստրի

Արաբկիրի տարածքային բաժնի կողմից

07. 07. 2010թ.

Ա. ԱՐՁՈՅԱՆ

Թիվ 0023 փոփոխությունը գրանցված է

իրավաբանական անձանց պետական ռեգիստրի

Արաբկիրի տարածքային բաժնի կողմից

28.02.2011թ.

«ԱԲՈՒԱ ՔՐԵԳԻՏ ՌԵՓՈՐԹԻՆԳ»

ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ

ԿԱՆՈՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ

ԵՐԵՎԱՆ 2008

1. ՀՈԴՎԱԾ. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

- 1.1 «ԱԶՈՒ Աքրեղիս Ռեփորթինգ» փակ բաժնետիրական ընկերությունը (հետագայում՝ Ընկերություն) ստեղծվում է 2004 թվականի հունվարի 29-ի որոշմամբ ստեղծված «ԱԶՈՒ Աքրեղիս Ռեփորթինգ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (գր թիվ 264.110.06634, գր վկայական N 03Ա 063417, գրանցված է 02.02.2004թ.) վերակազմավորման արդյունքում՝ Ընկերության Բաժնետերերի հիմնադիր Ժողովի 2006 թվականի ապրիլի 06-ի թիվ 1 որոշմամբ և հանդիսանում է վերջինիս իրավահաջորդը:
- 1.2 Ընկերությունը ստեղծվում է առանց ժամկետի սահմանափակման:
- 1.3 Ընկերությունը իր գործունեությամբ շահույթ ստանալու նպատակ հետապնդող առևտրային կազմակերպություն հանդիսացող տնտեսական ընկերություն է, որի Կանոնադրական կապիտալը բաժանված է Ընկերության նկատմամբ բաժնետերերի պարտավորական իրավունքը հավաստիացնող որոշակի թվով բաժնետոմսերի: Ընկերության բաժնետերերը պատասխանատու չեն Ընկերության պարտավորությունների համար և իրենց պատկանող բաժնետոմսերի արժեքի սահմաններում կրում են Ընկերության գործունեության հետ կապված վնասների ռիսկը:
- 1.4 Իր ստեղծման և գործունեության ընթացքում Ընկերությունը ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով, «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքով, «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքով, սույն Կանոնադրությամբ, օրենսդրական և ենթաօրենսդրական այլ իրավական ակտերով (հետագայում՝ Օրենսդրություն): Ընկերության հիմնադիր փաստաթուղթը սույն Կանոնադրությունն է, որի պահանջները պարտադիր են Ընկերության բաժնետերերի և կառավարման մարմինների համար:
- 1.5 Ընկերության իրավունակությունը ծագում է նրա պետական գրանցման և դադարում է լուծարման մասին պետական գրանցամատյանում գրանցման պահից:
- 1.6 Ընկերությունը ունի իր ֆիրմային անվանմամբ կլոր կնիք (հայերեն, ռուսերեն և անգլերեն), դրոշմներ և բլանկներ, ինչպես նաև օրենքով սահմանված կարգով գրանցված խորհրդանիշ, ապրանքային և այլ նշաններ, ինչպես նաև ֆիրմային ռեկվիզիտներ:
- 1.7 Ընկերության բաժնետերերի և Ընկերության միջև հարաբերությունները կարգավորվում են Օրենսդրությամբ, և բաժնետերերի ու Ընկերության միջև կնքված պայմանագրերով և սույն կանոնադրությամբ:
- 1.8 Ընկերությունն իր պարտավորությունների համար պատասխանատու է իրեն պատկանող ամբողջ գույքով:

- 1.9 Ընկերությունը պատասխանատու չէ իր բաժնետերերի պարտավորությունների համար:
- 1.10 Պետական և տեղական ինքնակառավարման մարմինները պատասխանատվություն չեն կրում Ընկերության պարտավորությունների համար:
- 1.11 Ընկերությունը պատասխանատվություն չի կրում պետական և տեղական ինքնակառավարման մարմինների պարտավորությունների համար:
- 1.12 Ընկերության ֆիրմային անվանումն է՝
հայերեն լրիվ՝ «ԱԶՈՒԱ Քրեդիտ Ուֆորթինգ» փակ բաժնետիրական ընկերություն,
կրճատ՝ «ԱԶՈՒԱ Քրեդիտ Ուֆորթինգ» ՓԲԸ,
ռուսերեն լրիվ՝ “АКРА Кредит Репортинг” Закрытое Акционерное Общество,
կրճատ՝ ЗАО “АКРА Кредит Репортинг”,
անգլերեն լրիվ՝ “ACRA Credit Reporting” Closed Joint Stock Company,
կրճատ՝ “ACRA Credit Reporting” CJSC.
- 1.13 Ընկերության իրավաբանական (փոստային) հասցեն է Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, Խանջյան 13/2, 3-րդ հարկ, 0010:
- 1.14 Ընկերության գտնվելու վայրը նրա մշտական գործող մարմնի՝ Կանոնադրությամբ սահմանված գործադիր մարմնի գտնվելու վայրն է:

2. ՀՈԴՎԱԾ. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ՆՊԱՏԱԿԸ

- 2.1 Ընկերության ստեղծման նպատակն է տնտեսական գործունեություն իրականացնելու ճանապարհով շահույթի ստացումը:
- 2.2 Ընկերությունը նպատակ ունի Օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացնել տվյալների հավաքագրում, մշակում, պահպանում և փոխանցում, վարկային և առևտրային զեկույցների տրամադրում և այլ ծառայությունների մատուցում:
Ընկերությունը երաշխավորում է իր հաճախորդների և գործընկերների առևտրային և անհատական գաղտնիք հանդիսացող տվյալների պահպանումը Օրենսդրությամբ սահմանված կարգով:
- 2.3 Ընկերությունը Օրենսդրությամբ սահմանված կարգով կարող է իրականացնել օրենքով չարգելված ցանկացած տնտեսական այլ գործունեություն:

3. ՀՈԴՎԱԾ. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ, ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ
ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1 Ընկերությունը իր գործունեությամբ շահույթ ստանալու նպատակ հետապնդող առևտրային կազմակերպություն հանդիսացող տնտեսական ընկերություն է, որի Կանոնադրական կապիտալը բաժանված է Ընկերության նկատմամբ բաժնետերերի պարտավորական իրավունքը հավաստիացնող որոշակի թվով բաժնետոմսերի:

3.2 Ընկերությունը համարվում է փակ, քանզի Ընկերության բաժնետոմսերը բաշխվում են միայն նրա բաժնետերերի, այդ թվում՝ հիմնադիրների կամ նախապես որոշված այլ անձանց միջև:

Ընկերությունը իրավունք չունի անցկացնել իր թողարկած բաժնետոմսերի բաց բաժանորդագրություն կամ անսահմանափակ թվով անձանց այլ կերպ առաջարկել ձեռք բերել դրանք:

3.3 Ընկերությունը իրավաբանական անձ է և ունի իր բաժնետերերի գույքից առանձնացված գույք, որը հաշվառվում է ինքնուրույն հաշվեկշռում: Ընկերությունն իր գործունեության նպատակներին համապատասխան տնօրինում, տիրապետում և օգտագործում է իր գույքը:

Ընկերությունն օրենսդրությամբ սահմանված կարգով կարող է բացել բանկային հաշիվներ Հայաստանի Հանրապետությունում և արտերկրում՝ Հայաստանի Հանրապետության արժույթով կամ արտարժույթով:

Ընկերությունն իրավունք ունի իր անունից ձեռք բերել և իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտավորություններ, որպես հայցվոր կամ պատասխանող հանդես գալ դատարանում:

3.4 Ընկերությունը իր պարտավորությունների համար պատասխանատվություն է կրում իր գույքով:

3.5 Ընկերությունը Օրենսդրությամբ սահմանված կարգով իրավունք ունի ստեղծել ներկայացուցչություններ և մասնաճյուղեր, ինչպես Հայաստանի Հանրապետության տարածքում, այնպես էլ արտերկրում: Ընկերությունը իրավունք ունի հիմնադրել Օրենսդրությամբ նախատեսված առևտրային կամ ոչ առևտրային կազմակերպություններ և/կամ լինել դրանց մասնակից, ինչպես նաև հիմնադրել իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող դուստր և կախյալ ընկերություններ և մասնակցել դրանցում:

Կառավարչական, սոցիալ-մշակութային, կրթական կամ ոչ առևտրային բնույթի այլ գործունեություն իրականացնելու համար Ընկերությունը կարող է ստեղծել

իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող հիմնարկներ, որոնք գործում են Ընկերության կողմից հաստատված կանոնադրությունների հիման վրա:

- 3.6 Իր կանոնադրական նպատակներն ու խնդիրներն իրականացնելու համար ընկերությունը Օրենսդրությանը համաձայն իրավունք ունի.
 - 3.6.1 կնքել քաղաքացիա-իրավական պայմանագրեր, ձեռք բերել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ և պարտավորություններ,
 - 3.6.2 գնել, վաճառել, վարձակալել շենքեր, շինություններ, տրանսպորտային միջոցներ, սարքավորումներ, կապի միջոցներ և այլն,
 - 3.6.3 Օրենսդրության պահանջներին համապատասխան և դրա շրջանակներում թողարկել կամ ձեռք բերել արժեթղթեր,
 - 3.6.4 Օրենսդրությանը համապատասխան վերակազմակերպվել,
 - 3.6.5 Հայաստանի Հանրապետությունում կամ արտերկրում գործող բանկերում ներդնել բանկային ավանդներ և/կամ ունենալ հաշվարկային հաշիվներ,
 - 3.6.6 Հայաստանի Հանրապետությունում կամ արտերկրում գործող բանկերից ստանալ վարկեր և/կամ իրավաբանական կամ ֆիզիկական անձանցից ստանալ փոխառություններ,
 - 3.6.7 կնքել աշխատանքային պայմանագրեր անհատ քաղաքացիների հետ,
 - 3.6.8 Օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացնել Օրենսդրությամբ նախատեսված և չարգելված այլ իրավունքներ:
- 3.7 Ընկերությունը պարտավոր է.
 - 3.7.1 օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով վարել հաշվապահական հաշվառում և ներկայացնել Օրենսդրությամբ նախատեսված հաշվետվություններ,
 - 3.7.2 Օրենսդրությամբ սահմանված կարգով և դեպքերում պատասխանատվություն կրել և փոխհատուցել իր կողմից հասցված վնասը,
 - 3.7.3 Օրենսդրությամբ սահմանված կարգով հայտարարել Ընկերության սնանկացման մասին այն դեպքում, երբ հնարավոր չէ բավարարել պարտատերերի օրինական գույքային պահանջները,
 - 3.7.4 իրականացնել սույն Կանոնադրությամբ և բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից նախատեսված փաստաթղթերի օրենսդրությամբ սահմանված կարգով գործավարությունը և հետագա պահպանումն ու արխիվացումը,
 - 3.7.5 կատարել Օրենսդրությամբ և սույն Կանոնադրությամբ սահմանված այլ պարտավորություններ:
- 3.8 Ընկերությունը կրում է Օրենսդրությամբ, ինչպես նաև բաժնետերերի ու Ընկերության միջև կնքված պայմանագրերով Ընկերությանը վերապահված այլ

իրավունքներ և պարտականություններ, անկախ դրանք սույն Կանոնադրությամբ նախատեսված լինելու փաստից:

4. ՀՈԴՎԱԾ. ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ, ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԵՏԵՐԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

4.1 Ընկերության բաժնետերեր կարող են լինել Հայաստանի Հանրապետության, ինչպես նաև օտարերկրյա իրավաբանական և ֆիզիկական անձինք, որոնք կմասնակցեն Ընկերության Կանոնադրական կապիտալի ձևավորմանը և բարեխղճորեն կկատարեն Ընկերության հիմնադիր փաստաթղթերով նախատեսված պարտավորությունները:

4.2 Ընկերության հասարակ (սովորական) բաժնետոմսերի սեփականատեր հանդիսացող բաժնետերն իրավունք ունի.

4.2.1 մասնակցել Ընկերության Բաժնետերերի ընդհանուր ժողովին,

4.2.2 մասնակցել Ընկերության կառավարմանը,

4.2.3 Ընկերության գործունեությունից առաջացած շահույթից ստանալ շահաբաժիններ,

4.2.4 ստանալ Ընկերության գործունեության վերաբերյալ ցանկացած տեղեկատվություն՝ գաղտնի փաստաթղթերից բացի, այդ թվում՝ ծանոթանալ հաշվապահական հաշվեկշռի հաշվետվություններին և այլ վիճակագրական փաստաթղթերի տվյալներին,

4.2.5 հայցով դիմել դատարան՝ Ընկերության Բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից ընդունված օրենսդրությանը հակասող որոշումների գանգատարկման նպատակով,

4.2.6 օգտվել բաժնետերերի ու Ընկերության միջև կնքված պայմանագրերից բխող իրավունքներից:

4.2.7 Ընկերության լուծարման դեպքում ստանալ Ընկերության գույքի իր հասանելիք մասը,

4.2.8 օգտվել Օրենսդրությամբ նախատեսված այլ իրավունքներից:

4.3 Ընկերության հասարակ (սովորական) բաժնետոմսերի սեփականատեր հանդիսացող բաժնետերը պարտավոր է.

4.3.1 ժամանակին կատարել հայտարարված Կանոնադրական կապիտալում իրենց ունեցած բաժնետոմսերի վճարումը,

4.3.2 Ընկերությունում որպես բաժնետեր հանդես գալու ընթացքում, ինչպես նաև այլևս բաժնետեր չլինելու դեպքում չհրապարակել Ընկերության բաժնետեր լինելու ընթացքում իրեն վստահված կամ իրեն հայտնի դարձած որևէ

առևտրային, ծառայողական, բանկային կամ այլ գաղտնիք կազմող տեղեկություն՝ առանց Ընկերության գրավոր թույլտվության: Ի դեպ վերոհիշյալ պարբերությունում նշված գաղտնիք կազմող տեղեկության հրապարակում է համարվում այդ տեղեկությունները բանավոր կամ գրավոր ձևով զանգվածային լրատվության միջոցներով կամ այլ կերպ հրապարակելը կամ տարածելը, երրորդ անձին կամ անձանց հայտնի դարձնելը, երրորդ անձանց նման տեղեկություններ հայթայթելու հնարավորություն ուղղակիորեն կամ անուղղակի ընձեռելը, այն է՝ թույլատրելը, չխոչընդոտելը կամ նման տեղեկությունների պահպանման կարգի խախտման հետևանքով այն հնարավոր դարձնելը:

- 4.3.3 կատարել հիմնադիր փաստաթղթերի բաժնետերերի ու Ընկերության միջև կնքված պայմանագրերի պահանջները:
- 4.3.4 տեղյակ պահել Ընկերության Տնօրենների Խորհրդին փոխկապակցված անձանց և Ընկերության գործարքներում իրենց շահագրգռվածության մասին՝ Օրենսդրությամբ սահմանված կարգով և դեպքերում:
- 4.4 Ընկերության բաժնետոմսերը վճարելու պարտականությունից բաժնետիրոջն ազատել, ներառյալ՝ Ընկերության նկատմամբ պահանջների հաշվանցելով, չի թույլատրվում:
- 4.5 Ընկերության բաժնետերերի կազմից բաժնետիրոջ դուրս գալը իրականացվում է սույն Կանոնադրության 4.6 կետին համապատասխան:
- 4.6 Բաժնետերն իրավունք ունի օտարել իր բաժնետոմսերը: Այս պարագայում օտարվող բաժնետոմսերի գնման նախապատվության իրավունքը տրվում է Ընկերության բաժնետերերին: Ընկերության Կանոնադրությամբ նախապատվության իրավունքի ժամկետը սահմանվում է 30 (երեսուն) օր՝ բաժնետոմսերի վաճառքի առաջարկման պահից: Այդ ժամկետի լրանալուց հետո, եթե բաժնետերերը հրաժարվել են կամ ձեռք չեն բերել վաճառվող բաժնետոմսերը, ընկերությունը կարող է ձեռք բերել դրանք սեփականատիրոջ հետ համաձայնեցված գնով: Ընկերության կողմից այդ բաժնետոմսերը ձեռք բերելուց հրաժարվելու դեպքում, բաժնետերն իրավունք ունի սույն հոդվածով նախատեսված կարգով վաճառել իր բաժնետոմս(եր)ը ոչ բաժնետեր հանդիսացող երրորդ անձանց՝ նույն գնով և մյուս հավասար պայմաններով, որոնցով դրանք առաջարկվել են բաժնետերերին:
- 4.7 Ընկերության կողմից իր բաժնետոմսերը զեղչելը, գնելը կամ հատուցմամբ այլ կերպ ձեռք բերելը կատարվում է Օրենսդրությամբ և բաժնետերերի ու Ընկերության միջև կնքված պայմանագրերով սահմանված դեպքերում և կարգով:
- 4.8 Բաժնետեր քաղաքացու մահվան կամ իրավաբանական անձի

իրավահաջորդության դեպքում Ընկերության բաժնետոմսերը անցնում են բաժնետեր քաղաքացու ժառանգներին կամ բաժնետեր իրավաբանական անձի իրավահաջորդներին՝ համաձայն Բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշման:

5. ՀՈԴՎԱԾ. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼԸ, ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼԻ ՓՈՓՈԽՈՒՄԸ

- 5.1 *Ընկերության յուրաքանչյուր հասարակ անվանական բաժնետոմսի անվանական արժեքը 8,475 (ութ հազար չորս հարյուր յոթանասունհինգ) ՀՀ դրամ է: Ընկերության Կանոնադրական կապիտալը սահմանվում է 200,204,925 (երկու հարյուր միլիոն երկու հարյուր չորս հազար ինը հարյուր քսանհինգ) ՀՀ դրամ, որը կազմում է Ընկերության կողմից տեղաբաշխված 23,623 (քսաներեք հազար վեց հարյուր քսաներեք) բաժնետոմսերի դիմաց վճարված դրանց անվանական արժեքի հանրագումարը:*
- 5.2 1 (մեկ) հասարակ անվանական բաժնետոմսը բաժնետիրոջը տալիս է 1 (մեկ) ձայնի իրավունք: Հասարակ անվանական բաժնետոմսի ձևը սահմանված է ոչ փաստաթղթային:
- 5.3 Կանոնադրական կապիտալում դրամական ներդրումները կատարվում են Հայաստանի Հանրապետությունում պաշտոնապես շրջանառության մեջ գտնվող դրամով:
- 5.4 Ընկերությունը կարող է Կանոնադրական կապիտալը ավելացնել այն դեպքում, երբ թողարկված բոլոր բաժնետոմսերն իրենց անվանական արժեքով լրիվ վճարված են: Կանոնադրական կապիտալը մեծացվում է լրացուցիչ բաժնետոմսերի տեղաբաշխման կամ բաժնետոմսերի անվանական արժեքի ավելացման միջոցով:
- 5.5 Ընկերությունը Բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշմամբ կարող է միաձուլել (կոնսոլիդացնել) տեղաբաշխված բաժնետոմսերը, ավելացնելով անվանական արժեքը կամ բաժանելով ավելի փոքր անվանական արժեքի բաժնետոմսերի: Ընկերության Բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշմամբ սահմանված ժամկետներում բաժնետոմսերի անվանական արժեքի վերանվանման չներկայացված բաժնետոմսերը ճանաչվում են անվավեր: Միաձուլված (կոնսոլիդացված) բաժնետոմսերի շրջանառությունը և սեփականատերերի իրավունքներն ու պարտավորությունները կարգավորվում են Օրենսդրությամբ:
- 5.6 Կանոնադրական կապիտալի ավելացման մասին որոշումը ընդունվում է Ընկերության Բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից:

Կանոնադրական կապիտալի ավելացման մասին որոշումն երրորդ անձանց համար ուժի մեջ է մտնում Կանոնադրության մեջ փոփոխություններ կատարելու և դրա գրանցման պահից:

5.7 Բաժնետոմսերի ձեռքբերումը կարող է իրականացվել լրիվ կամ տարաժամկետ վճարմամբ: Բաժնետոմսերի տարաժամկետ ձեռք բերման ժամանակ, Բաժնետերերի ընդհանուր Ժողովի որոշմամբ սահմանված ժամկետներում, պետք է վճարվի դրանց անվանական արժեքի առնվազն 25 (քսանհինգ) տոկոսը:

Տարաժամկետ վճարմամբ ձեռք բերված բաժնետոմսերի գնորդին տրվում է տեղեկանք, որը փոխարինվում է ռեեստրից քաղվածքով ամբողջ գումարի վճարումից հետո: Բաժնետոմսի գնորդը դրա թողարկումով պայմանավորված ձայնի իրավունքը ձեռք է բերում միայն նախատեսված ամբողջ գումարի վճարումից հետո:

5.8 Ընկերության բաժնետերերի ռեեստրի վարումը իրականացվում է մասնագիտացված կազմակերպության կողմից:

5.9 Ընկերության կողմից թողարկվող բաժնետոմսն անբաժանելի է:

Այն դեպքում, երբ միևնույն բաժնետոմսը պատկանում է մի քանի անձանց, նրանք բոլորը Ընկերության նկատմամբ համարվում են մեկ բաժնետեր և կարող են իրենց իրավունքներն իրականացնել իրենցից որևէ մեկի կամ ընդհանուր ներկայացուցչի միջոցով:

5.10 Ընկերությունը Օրենսդրությամբ սահմանված կարգով իրավունք ունի տեղաբաշխել նաև հաստատագրված կամ փոփոխական շահաբաժնով, կուտակման, փոխարկելի և այլ տեսակի արտոնյալ բաժնետոմսեր:

6. ՀՈԴՎԱԾ. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐԸ, ՇԱՀՈՒՅԹԸ ԵՎ ԴՐԱ ԲԱՇԽՈՒՄԸ

6.1 Կանոնադրական կապիտալից բացի, Ընկերությունում ձևավորվում են նաև հետևյալ հիմնադրամները.

6.1.1 պահուստային հիմնադրամ,

6.1.2 ընկերության զարգացման, վերազինման և սոցիալական ապահովության հիմնադրամներ.

6.1.3 շահաբաժինների (դիվիդենդների) հիմնադրամ:

6.1.4 Օրենսդրությամբ սահմանված կարգով և Բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշմամբ ընկերությունում կարող են ձևավորվել այլ հիմնադրամներ:

6.2 Պահուստային հիմնադրամը սահմանվում է Ընկերության Կանոնադրական կապիտալի 15 (տասնհինգ) տոկոսի չափով:

- 6.3 Պահուստային հիմնադրամը գոյանում է Ընկերության բաշխման ենթակա շահույթից կատարվող մասհանումների հաշվին՝ մինչև նշված չափին հասնելը: Տարեկան կատարվող մասհանումների չափը պետք է պակաս չլինի Ընկերության բաշխման ենթակա շահույթի 5 (հինգ) տոկոսից: Պահուստային հիմնադրամի միջոցների ծախսման կարգը որոշվում է Բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից: Պահուստային հիմնադրամն օգտագործվում է Ընկերության կորուստները ծածկելու, ինչպես նաև Ընկերության պարտատոմսերը մարելու և բաժնետոմսերը հետ գնելու համար, եթե Ընկերության շահույթը և այլ միջոցները դրա համար չեն բավարարում: Պահուստային հիմնադրամը չի կարող օգտագործվել այլ նպատակների համար:
- 6.4 Պահուստային հիմնադրամ կատարվող փոխանցումներից ու բյուջետային հատկացումներից հետո մնացած շահույթը (զուտ շահույթը) մնում է Ընկերության տրամադրության տակ: Բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշումներով սահմանված պարտադիր նորմերին համապատասխան զուտ շահույթից համալրվում են Ընկերության զարգացման և սոցիալական ապահովության, շահաբաժինների հիմնադրամները և այլ հիմնադրամներ:
- 6.5 Ընկերության զարգացման և սոցիալական ապահովության հիմնադրամները կազմավորվում են Ընկերության զուտ շահույթից կատարվող հատկացումների հաշվին: Հիմնադրամն օգտագործվում է Ընկերության վերակառուցման, ընդլայնման, նյութատեխնիկական բազայի հիմնանորոգման և սոցիալական ապահովության նպատակներով:
- 6.6 Շահաբաժինների հիմնադրամը կազմավորվում է Ընկերության զուտ շահույթից կատարվող մասհանումների հաշվին: Հիմնադրամն օգտագործվում է Ընկերության գործունեության արդյունքներով հաշվարկված շահաբաժինների (դիվիդենտների) վճարման համար:
- 6.7 Շահաբաժինը Բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշմամբ կարող է վճարվել եռամսյակը, կիսամյակը կամ տարին մեկ անգամ: Շահաբաժինը վճարվում է Հայաստանի Հանրապետության դրամով: Բաժնետերերին իրենց բաժնետոմսերի դիմաց շահաբաժինների վճարումները Ընկերության կողմից չեն երաշխավորվում:
- 6.8 Ընկերության Բաժնետերերի կազմից դուրս եկող բաժնետերն իրավունք ունի ստանալ դուրս գալու օրվա դրությամբ իրեն հասանելիք շահաբաժինը:
- 6.9 Ընկերության Բաժնետերերի ընդհանուր ժողովն իրավունք ունի որոշում ընդունել բաժնետոմսերի դիմաց շահաբաժիններ չվճարելու վերաբերյալ: Այդ որոշումների գործունեության ժամկետը սահմանվում է Ընկերության Բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից, բայց չի կարող 1 (մեկ) տարուց ավել լինել:

- 6.10 Ընկերությունն իրավունք չունի որոշում ընդունել տեղաբաշխված բաժնետոմսերի շահաբաժինների վճարման մասին, եթե Ընկերության Կանոնադրական կապիտալը ամբողջությամբ չի վճարվել:
- 6.11 Ընկերության բաժնետերերին շահաբաժիններ բաշխելն արգելվում է, եթե դրանք բաշխելու պահին Ընկերության կրած կորուստները (վնասները) հավասար են կամ գերազանցում են այդ պահին ընկերությունում առկա չբաշխված զուտ շահույթի գումարը: Ընկերությունը իրավունք չունի շահաբաժիններ հայտարարել և վճարել, եթե Ընկերության զուտ ակտիվների արժեքը պակաս է նրա Կանոնադրական կապիտալից կամ շահաբաժիններ վճարելու արդյունքում կպակասի դրա չափից:

7. ՀՈԳՎԱԾ. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՍԱՆ ՍԱՐՄԻՆՆԵՐԸ

- 7.1 Ընկերության կառավարման մարմիններն են.
- 7.1.1 Բաժնետերերի ընդհանուր ժողովը՝ Ընկերության կառավարման բարձրագույն մարմինը,
 - 7.1.2 Ընկերության Տնօրենների խորհուրդը,
 - 7.1.3 Ընկերության Տնօրենը:

8. ՀՈԳՎԱԾ. ԲԱԺՆԵՏԵՐԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ

- 8.1 Ընկերության Բաժնետերերի ընդհանուր ժողովը (հետագայում՝ ԲԸԺ) Ընկերության կառավարման բարձրագույն մարմինն է, որը կազմված է Ընկերության բոլոր բաժնետերերի կամ օրենսդրությամբ սահմանված կարգով նրանց կողմից լիազորված ներկայացուցիչներից: ԲԸԺ-ին կարող են մասնակցել Ընկերության բաժնետեր չհանդիսացող Ընկերության Տնօրենների խորհրդի անդամները՝ խորհրդակցական ձայնի իրավունքով, ինչպես նաև վերստուգող հանձնաժողովի անդամները և աուդիտն իրականացնող անձը, եթե նրա եզրակացությունը առկա է գումարվող ժողովի օրակարգում:
- 8.2 ԲԸԺ -ի բացառիկ իրավասությանն են վերաբերում հետևյալ հարցերը.
- 8.2.1 Ընկերության Կանոնադրության հաստատումը և դրա մեջ փոփոխությունների և լրացումների կատարումը,
 - 8.2.2 Ընկերության կողմից պարտատոմսերի և այլ արժեթղթերի տեղաբաշխումը,
 - 8.2.3 Ընկերության վերակազմակերպման, ինչպես նաև Ընկերության լուծարման մասին որոշում ընդունելը, լուծարման հանձնաժողովի անդամների նշանակումը, միջանկյալ և ամփոփիչ լուծարային հաշվեկշիռների հաստատումը,

- 8.2.4 Ընկերության Տնօրենների խորհրդի քանակական կազմի հաստատումը, դրա անդամների ընտրությունը և նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը,
 - 8.2.5 Ընկերության Վերստուգող հանձնաժողովի անդամների ընտրությունը և նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը,
 - 8.2.6 Ընկերության աուդիտն իրականացնող անձի և նրա կողմից ներկայացվող եզրակացության հաստատումը,
 - 8.2.7 Ընկերության կանոնադրական կապիտալի չափի նվազեցումը,
 - 8.2.8 Ընկերության տարեկան հաշվետվությունների, հաշվապահական հաշվեկշիռների, շահույթների և վնասների հաշվի, շահույթների և վնասների բաշխման հաստատումը, տարեկան շահաբաժինների վճարման մասին որոշման ընդունումը և տարեկան շահաբաժինների չափի հաստատումը:
- 8.3 Ընկերության Բաժնետերերի ընդհանուր ժողովին Ընկերության Կանոնադրությամբ վերապահվում են նաև հետևյալ իրավասությունները.
- 8.3.1 Ընկերության Բաժնետերերի ընդհանուր ժողովի վարման կարգը և հաշվիչ հանձնաժողովի ձևավորումը,
 - 8.3.2 Ընկերության բաժնետոմսերի համախմբումը (կոնսոլիդացիան) և բաժանումը,
 - 8.3.3 Ընկերության գույքի օտարման և ձեռք բերման հետ կապված խոշոր գործարքների կնքման վերաբերյալ որոշման ընդունումը, այն դեպքում, երբ գործարքի առարկա հանդիսացող գույքի արժեքը գործարքը կնքելու մասին որոշումն ընդունելու պահի դրությամբ կազմում է Ընկերության ակտիվների հաշվեկշռային արժեքի 50 (հիսուն) տոկոսից ավելին՝ դրանց մասնակցող բաժնետերերի (քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի) ձայների 3/4-ով,
 - 8.3.4 Ընկերության ղեկավար պաշտոնատար անձանց (Տնօրենների խորհրդի անդամների) վարձատրության չափերի հաստատումը,
 - 8.3.5 Օրենսդրությամբ համաձայն Ընկերության բաժնետոմսերի կամ բաժնետոմսերի փոխարկվող Ընկերության այլ արժեթղթերի Ընկերության բաժնետերերի նախապատվության իրավունքը չկիրառելու մասին որոշման ընդունումը,
 - 8.3.6 Ընկերության կողմից բաժնետերերին տեղեկությունների և նյութերի հաղորդման ձևի որոշումը, ներառյալ զանգվածային լրատվության համապատասխան միջոցի ընտրությունը, եթե հաղորդումը պետք է իրականացվի հրապարակային հայտարարության ձևով,

- 8.3.7 Օրենսդրությամբ սահմանված կարգով Ընկերության բաժնետիրոջ կողմից երրորդ անձին բաժնետոմսերի օտարման մասին որոշման կայացումը,
- 8.3.8 Ընկերության Խորհրդատվական խորհրդի, անաչառ գործունեության խորհրդի և Օրենսդրությանը չհակասող այլ մարմինների ստեղծումը,
- 8.3.9 Ընկերության Կանոնադրական կապիտալի չափը փոփոխելը, մասնավորապես՝ բաժնետոմսերի անվանական արժեքի մեծացման և/կամ լրացուցիչ բաժնետոմսերի տեղաբաշխման միջոցով Կանոնադրական կապիտալի ավելացումը,
- 8.3.10 Ընկերության կողմից դուստր կամ կախյալ ընկերությունների ստեղծման, դուստր կամ կախյալ ընկերություններում, հոլդինգային ընկերություններում, առևտրային կազմակերպությունների այլ միություններում մասնակցության մասին որոշման ընդունումը,
- 8.3.11 Օրենսդրությամբ նախատեսված ընդհանուր ժողովի բացառիկ իրավասությունը հանդիսացող այլ որոշումների ընդունում:
- 8.4 Ընկերության Բաժնետերերի ընդհանուր ժողովն իրավասու է (քվորում ունի), եթե Ընդհանուր ժողովի մասնակիցների գրանցման ավարտի պահին գրանցվել են Ընկերության բաժնետերերը (նրանց ներկայացուցիչները), որոնք համատեղ տիրապետում են Ընկերության տեղաբաշխված բաժնետոմսերի 50-ից (հիսուն) ավելի տոկոսին: Քվորումի բացակայության դեպքում հայտարարվում է Ընկերության Բաժնետերերի նոր Ընդհանուր ժողովի գումարման ամսաթիվը: Նոր ժողովի գումարման դեպքում օրակարգի փոփոխություն չի թույլատրվում:
- Ընկերության բաժնետերերի չկայացած Ընդհանուր ժողովի փոխարեն գումարվելիք նոր ժողովը իրավասու է, եթե մասնակիցների գրանցման ավարտի պահին գրանցվել են Ընկերության բաժնետերերը (նրանց ներկայացուցիչները), որոնք համատեղ տիրապետում են տեղաբաշխված բաժնետոմսերի 30-ից (երեսուն) ավելի տոկոսին:
- Ընկերության բաժնետերերի ծանուցումը Ընկերության նոր Ընդհանուր ժողովի գումարման մասին կատարվում է ժողովի գումարման ամսաթվից առնվազն 10 (տաս) օր շուտ:
- 8.5 8,2 հոդվածի 8.2.1; 8.2.2, 8.2.3; 8.2.7; 8.2.8 թվարկված հարցերի վերաբերյալ Ընդհանուր ժողովի կողմից որոշումներն ընդունվում են ժողովին մասնակցող՝ քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի ձայների 3/4-ով, սակայն ոչ պակաս քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի ձայների 2/3-ից: Իսկ 8.2.4; 8.2.5; 8.2.6; թվարկված հարցերի վերաբերյալ Ընդհանուր ժողովի կողմից որոշումներն ընդունվում են ժողովին մասնակցող՝ քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի ձայների 2/3-ով:

- 8.6 Ընկերության Բաժնետերերի ընդհանուր ժողովը իրավունք չունի փոփոխել ժողովի օրակարգը, ինչպես նաև որոշումներ ընդունել օրակարգում չընդգրկված հարցերի վերաբերյալ:
- 8.7 Ընկերության Բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից ընդունված որոշումների մասին տեղեկությունները, ինչպես նաև քվեարկության արդյունքները Ընկերության բաժնետերերին հաղորդվում են այդ որոշումները ընդունելու պահից 45 օրվա ընթացքում:
- 8.8 Ընկերության Բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշումները կարող են ընդունվել առանց ժողովի գումարման՝ հեռակա կարգով քվեարկությամբ (հարցման միջոցով), բացառությամբ 8.2.3, 8.2.8, կետերի:
- 8.9 Հեռակա կարգով քվեարկությամբ ընդունված Ընկերության Բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշումը օրինական ուժ ունի, եթե քվեարկությանը մասնակցել են Ընկերության քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի կեսից ավելին:
- 8.10 Հեռակա կարգով քվեարկությունը կատարվում է Օրենսդրության պահանջներին համապատասխանող քվեաթերթիկների օգտագործմամբ: Հեռակա կարգով քվեարկության ժամանակ քվեաթերթիկները պետք է տրամադրվեն բաժնետերերին՝ լրացրած քվեաթերթիկները Ընկերության կողմից ընդունելը ավարտելու պահից առնվազն 30 (երեսուն) օր առաջ:
Ընկերության Բաժնետերերի ընդհանուր ժողով հեռակա կարգով գումարելիս, բաժնետերերին քվեաթերթիկների և ժողովի օրակարգի հետ մեկտեղ առաքվում են Օրենսդրությամբ նախատեսված նյութեր և տեղեկություններ:
- 8.11 Ընկերության բաժնետերերը, ինչպես նաև Ընկերության Բաժնետերերի ընդհանուր ժողովում մասնակցելու իրավունք ունեցող անձինք ծանուցվում են Ընկերության Բաժնետերերի ընդհանուր ժողովի գումարման մասին նրանց համապատասխան գրավոր ծանուցում ուղարկելու միջոցով՝ պատվիրված նամակների ձևով կամ անձամբ հանձնելով:
- 8.12 Ընկերությունը Բաժնետերերի ընդհանուր ժողովի մասին իր բաժնետերերին գրավոր ծանուցում է ուղարկում Ընդհանուր ժողովի գումարման օրվանից առնվազն 15 (տասնհինգ) օր առաջ:
- 8.13 Ընկերության բաժնետեր(եր)ը, որը (որոնք) հանդիսանում է բաժնետոմսերի առնվազն 2 (երկու) տոկոսի սեփականատեր, Ընկերության ֆինանսական տարվա ավարտից հետո 30 (երեսուն) օրվա ընթացքում իրավունք ունի (ունեն) երկուսից ոչ ավել առաջարկություններ ներկայացնել Ընկերության Բաժնետերերի ընդհանուր տարեկան ժողովի օրակարգի վերաբերյալ, ինչպես նաև առաջարկել Ընկերության Տնօրենների խորհրդի և Վերստուգող հանձնաժողովի անդամության թեկնածուներ:

Ընդհանուր ժողովի օրակարգի վերաբերյալ առաջարկությունները ներկայացվում են գրավոր՝ նշելով հարցի առաջադրման հիմքերը, հարցը մտցնող բաժնետիրոջ անունը, նրան պատկանող բաժնետոմսերի քանակը և առաջարկության հեղինակի ստորագրությունը կամ դրա ֆաքսիմիլային վերարտադրությունը:

Ընկերության Տնօրենների խորհուրդը պարտավոր է քննարկել ներկայացված առաջարկները և որոշում ընդունել՝ դրանք Ընկերության տարեկան Ընդհանուր ժողովում կամ թեկնածուների ցանկում ընդգրկելու կամ ընդգրկելը մերժելու մասին սույն կետով նշված ժամկետը լրանալուց 15 (տասնհինգ) օրվա ընթացքում:

8.14 Բաժնետերերի ընդհանուր տարեկան ժողովը գումարվում է Ընկերության հերթական ֆինանսական տարվա ավարտից հետո մինչև վեց ամիս ժամկետում: Բաժնետերերի տարեկան ժողովից բացի գումարվող Բաժնետերերի ընդհանուր ժողովները համարվում են արտահերթ:

Արտահերթ ժողովներ կարող են գումարվել ցանկացած ժամանակ Տնօրենների խորհրդի որոշմամբ՝ սեփական նախաձեռնությամբ, Տնօրենի, Վերստուգող հանձնաժողովի, Ընկերության աուդիտն իրականացնող անձի կամ պահանջը ներկայացնելու դրությամբ Ընկերության՝ առնվազն 10 (տաս) տոկոս բաժնետոմսերի սեփականատեր բաժնետիրոջ պահանջով:

8.15 Ընկերության բաժնետերերի արտահերթ Ընդհանուր ժողովի գումարման մասին ներկայացրած պահանջի առկայության դեպքում Ընկերության Տնօրենների խորհուրդը պետք է Ընկերության Բաժնետերերի արտահերթ Ընդհանուր ժողով գումարի՝ պահանջը ներկայացնելու պահից 45 (քառասունհինգ) օրվա ընթացքում:

8.16 Ընկերության Բաժնետերերի արտահերթ Ընդհանուր ժողովի գումարման կամ գումարումը մերժելու մասին Ընկերության Տնօրենների խորհրդի որոշումը պետք է ընդունվի դրա պահանջը ներկայացնելու ամսաթվից հետո 10 (տաս) օրյա ժամկետում:

8.17 Ընկերության բաժնետերերը Ընկերության Ընդհանուր ժողովում մասնակցելու իրենց իրավունքը կարող են իրականացնել անձամբ կամ լիազորված ներկայացուցչի միջոցով: Բաժնետիրոջ ներկայացուցիչը կարող է մասնակցել Բաժնետերերի ընդհանուր ժողովին միայն օրենսդրությամբ սահմանված կարգով՝ լիազորագրի առկայության դեպքում:

8.18 Ընդհանուր ժողովում քվեարկությունը կատարվում է 5.2 կետի համաձայն՝ փաստացի վճարված բաժնետոմսը՝ 1 (մեկ) ձայն սկզբունքով:

8.19 Ընկերության Բաժնետերերի ընդհանուր ժողովի արձանագրությունը կազմվում է Ընկերության Բաժնետերերի ընդհանուր ժողովի ավարտից 5 (հինգ) օրվա ընթացքում, 2 (երկու) օրինակից, որոնք ստորագրվում են Ժողովի նախագահի և քարտուղարի կողմից:

Ընկերության բաժնետերերը իրավունք ունեն ծանոթանալ Ընկերության Բաժնետերերի ընդհանուր ժողովի արձանագրություններին:

8.20 Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովը գումարվում է առնվազն տարին 1 (մեկ) անգամ:

9. ՀՈԴՎԱԾ. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴԸ

9.1 Ընկերության Տնօրենների խորհրդի իրավասությունն է հանդիսանում Ընկերության գործունեության ընդհանուր ղեկավարման հետ կապված հարցերի լուծումը, բացառությամբ այն հարցերի, որոնք հանդիսանում են Բաժնետերերի ընդհանուր ժողովի բացառիկ իրավասությունը:

9.2 Ընկերության Տնօրենների խորհրդի բացառիկ իրավասությանն են պատկանում հետևյալ հարցերը.

9.2.1 Ընկերության գործունեության հիմնական ուղղությունների որոշումը, ներառյալ Ընկերության հեռանկարային զարգացման ծրագրի հաստատումը,

9.2.2 Օրենսդրությամբ սահմանված կարգով Ընկերության Բաժնետերերի տարեկան և արտահերթ Ընդհանուր ժողովների գումարումը՝ հաշվի առնելով 8.20 կետի դրույթը,

9.2.3 Ընկերության տնօրենի նշանակումը, նրա լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը և վարձատրության չափերի հաստատումը: Տնօրենի լիազորությունները վաղաժամկետ դադարում են իր դիմումի համաձայն կամ եթե. ա) նա դատարանի օրինական ուժի մեջ մտած վճռով ճանաչվել է անգործունակ կամ սահմանափակ գործունակ, բ) օրենքով սահմանված կարգով որակազրկվել է կամ զրկվել է որոշակի պաշտոն վարելու իրավունքից: Տնօրենի լիազորությունները վաղաժամկետ կարող են դադարեցվել նաև լիազորությունների մնացած ժամանակահատվածի, իսկ եթե այդ ժամանակահատվածը մեկ տարուց ավելի է, ապա մեկ տարվա համար սահմանված աշխատավարձը ընկերության կողմից նրան փոխհատուցելու պայմանով: Ընկերությունն իրավունք ունի տնօրենի պաշտոնից ազատված անձից հետ պահանջելու իրեն փոխհատուցած աշխատավարձը՝ դատարանում ապացուցելով տնօրենի կողմից պաշտոնեական պարտականությունների թերացման փաստը:

Ընկերության տնօրենի տեղակալի նշանակումը, աշխատանքից ազատումը, վարձատրության չափի հաստատումը և փոփոխումը՝ Ընկերության տնօրենի ներկայացմամբ և ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով: Տնօրենի

բացակայության դեպքում նրա լիազորություններն իրականացնում է տնօրենի տեղակալը:

- 9.2.4 Ընկերության կողմից տեղաբաշխված բաժնետոմսերի ձեռք բերումը և հետ գնումը Օրենսդրությամբ նախատեսված դեպքերում,
- 9.2.5 Ընկերության Բաժնետերերի ընդհանուր ժողովի օրակարգի, Բաժնետերերի ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու ամսաթվի հաստատումը, Բաժնետերերի ընդհանուր ժողովի օրակարգի հարցերի նախապես քննարկումը, Ընկերության Բաժնետերերի ընդհանուր ժողովի նախապատրաստման և գումարման հետ կապված հարցերի լուծումը,
- 9.2.6 Օրենսդրությամբ սահմանված կարգով Ընկերության գույքի շուկայական արժեքի որոշումը,
- 9.2.7 Օրենսդրությամբ նախատեսված դեպքերում և կարգով Ընկերության տեղաբաշխված բաժնետոմսերի, պարտատոմսերի և այլ արժեթղթերի ձեռքբերումը,
- 9.2.8 Ընկերության տեղաբաշխված բաժնետոմսերի վերաբաշխումը,
- 9.2.9 Ընկերության գույքի օտարման և ձեռք բերման հետ կապված խոշոր գործարքների կնքման վերաբերյալ որոշման ընդունումը, երբ գործարքի առարկա հանդիսացող գույքը և նրա արժեքը գործարքը կնքելու պահին կազմում է Ընկերության ակտիվների հաշվեկշռային արժեքի 25-ից 50 (քսանհինգից հիսուն) տոկոսը՝ Օրենսդրությամբ սահմանված կարգով,
- 9.2.10 Ընդհանուր ժողովի համար Ընկերության բաժնետոմսերի դիմաց վճարվող տարեկան շահաբաժինների չափի և վճարման կարգի վերաբերյալ առաջարկությունների նախապատրաստումը,
- 9.2.11 Ընկերության բաժնետոմսերի միջանկյալ (եռամսյակային կամ կիսամյակային) շահաբաժինների չափի և վճարման կարգի սահմանումը,
- 9.2.12 Ընկերության զարգացման, վերազինման և սոցիալական ապահովության հիմնադրամների օգտագործումը,
- 9.2.13 Ընկերության կողմից մատուցվող ծառայությունների սակագները և տարվա կտրվածքով սակագնային քաղաքականությունը, սակագների հաշվարկի հիմքում, որպես նվազագույն շեմ ընդունվում է նախորդ ֆինանսական տարվա բանկային միջին շահութաբերությունը:
- 9.2.14 Այլ կազմակերպություններում իր մասնակցության չափի որոշումը, եթե այդ մասնակցությունը խոշոր գործարք չի համարվում,
- 9.2.15 Ընկերության մասնաճյուղերի, ներկայացուցչությունների և հիմնարկների ստեղծումը, դրանց կանոնադրությունների հաստատումը:

- 9.2.16 Ընկերության աուդիտն իրականացնող անձի հետ պայմանագրի կնքումը և նրա վարձատրության չափի վերաբերյալ որոշում կայացնելը,
- 9.2.17 Ընկերության գործունեությունը կանոնակարգող ներքին փաստաթղթերի հաստատումը,
- 9.2.18 Ընկերության վարչակազմակերպչական կառուցվածքի և հաստիքացուցակի հաստատումը,
- 9.2.19 Տարեկան ծախսերի նախահաշվի և դրա կատարողականի հաստատումը,
- 9.2.20 Ընկերության գործունեության վերաբերյալ գաղտնիք ներկայացնող տեղեկությունների ցանկի սահմանումը,
- 9.2.21 Ընկերության ներքին աուդիտի կոմիտեի ստեղծումը և դրա անդամների ընտրությունը,
- 9.2.22 Ընկերության ներքին հսկողության ստանդարտների հաստատումը
- 9.2.23 Ընկերության տնօրենը եռամսյակը մեկ անգամ Ընկերության տնօրենների խորհրդին ներկայացնում է հաշվետվություն Ընկերության ֆինանսական վիճակի մասին:
- 9.2.24 Օրենսդրությամբ սահմանված այլ իրավասությունների իրականացումը:
Ընկերության Տնօրենների խորհրդի բացառիկ իրավասությանը սույն կանոնադրությամբ վերապահված հարցերը չեն կարող նրա կողմից փոխանցվել Ընկերության գործադիր մարմինների իրավասությանը:

9.3 Ընկերության Տնօրենների խորհուրդը կարող է ընտրվել բաժնետերերից կամ նրանց ներկայացուցիչներից, ինչպես նաև ոչ բաժնետերերից: Ընկերության այն բաժնետերերը, որոնք, փոխադարձ գրավոր համաձայնության առկայության դեպքում, միասին տիրապետում են առնվազն 10(տաս) % բաժնետոմսերի, իրավունք ունեն ներկայացնելու Տնօրենների խորհրդի մեկ անդամ: Տնօրենների խորհրդի յուրաքանչյուր անդամը ընտրվում է 3 (երեք) տարի ժամկետով:

Տնօրենների խորհրդի անդամ հանդիսացող բաժնետերը, որն օտարում է ամբողջությամբ իրեն պատկանող բաժնետոմսերը համարվում է Տնօրենների խորհրդի կազմից ազատված: 10 (տաս) % և ավելի բաժնետոմսերի տիրապետող բաժնետիրոջ ներկայացուցիչ խորհրդի անդամը համարվում է Տնօրենների խորհրդի կազմից ազատված այն դեպքում, եթե նրա բաժնետոմսերի քանակը նվազում է 10 (տաս) %-ից:

9.4 Ընկերության Տնօրենների խորհրդի քանակական կազմը Բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշմամբ սահմանվում է 9 (ինը) հոգի: Ընկերության Տնօրենների խորհրդի թվաքանակը Բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշմամբ կարող է փոփոխվել:

Տնօրենների խորհրդի անդամները պետք է համապատասխանեն Օրենսդրությամբ, սույն կանոնադրությամբ և այլ փաստաթղթերով սահմանված չափանիշներին:

9.5 Ընկերության Տնօրենների խորհրդի Նախագահը և նրա տեղակալը ընտրվում են Ընկերության Տնօրենների խորհրդի անդամների կողմից, Տնօրենների խորհրդի անդամների կազմից՝ Տնօրենների խորհրդի անդամների ընդհանուր քանակի ձայների մեծամասնությամբ:

9.6 Ընկերության Տնօրենների խորհրդի նախագահի լիազորությունները.

9.6.1 կազմակերպում է Ընկերության Տնօրենների խորհրդի աշխատանքները,

9.6.2 գումարում է Ընկերության Տնօրենների խորհրդի նիստերը և նախագահում դրանք,

9.6.3 կազմակերպում է նիստերի արձանագրության վարումը,

9.6.4 նախագահում է Ընկերության Բաժնետերերի ընդհանուր ժողովներում:

Ընկերության Տնօրենների խորհրդի նախագահի բացակայության դեպքում նրա պարտականությունները կատարում է Ընկերության Տնօրենների խորհրդի նախագահի տեղակալը:

9.7 Ընկերության Տնօրենների խորհրդի նիստերը գումարվում են Ընկերության Տնօրենների խորհրդի նախագահի կողմից.

9.7.1 Ընկերության Տնօրենների խորհրդի նախագահի նախաձեռնությամբ, Ընկերության Տնօրենների խորհրդի անդամի, Ընկերության Վերստուգող հանձնաժողովի, Ընկերության ատլիտոն իրականացնող անձի, Ընկերության տնօրենի պահանջով Տնօրենների խորհրդի նիստը հրավիրվում է առնվազն 3(երեք) օրվա ընթացքում:

9.8 Տնօրենների խորհրդի որոշումը կարող է ընդունվել հեռակա քվեարկությամբ (հարցման կարգով):

9.9 Ընկերության Տնօրենների խորհուրդը համարվում է իրավասու, եթե նրա աշխատանքին մասնակցում է Տնօրենների խորհրդի առնվազն 5 (հինգ) անդամ: Քվորումի բացակայության դեպքում, ներկա անդամների որոշմամբ, քննարկումը կարող է հետաձգվել առավելագույնս 2 (երկու) օրով:

Եթե Ընկերության Տնօրենների խորհրդի անդամների քանակը նվազում է Ընկերության Կանոնադրությամբ սահմանված քանակի կեսից, Ընկերությունը պետք է այն լրացնելու նպատակով հրավիրի բաժնետերերի արտահերթ Ընդհանուր ժողով, որի մասին որոշումը կայացնում է Ընկերության Տնօրենների խորհուրդը:

9.10 Տնօրենների խորհրդի որոշումներն ընդունվում են նիստին ներկա Տնօրենների խորհրդի անդամների ձայների 2/3-ով: Քվեարկության ժամանակ Ընկերության Տնօրենների խորհրդի անդամը ունի միայն 1 (մեկ) ձայնի իրավունք:

Ձայնի և քվեարկության իրավունքի փոխանցումը Տնօրենների խորհրդի մեկ անդամից մյուսին չի թույլատրվում, ի դեպ տեղեկատվական, տեխնիկական և ֆինանսական անվտանգությանը, գնային, այդ թվում՝ նաև բյուջետային քաղաքականությանը, բիզնես

ծրագրին առընչվող հարցերի շուրջ որոշումները կայացնելիս հաշվի է առվում ՀՀ կենտրոնական բանկի կարծիքը և (ղիրքորոշումը):

9.11 Ընկերության Տնօրենների խորհրդի նիստերին և նրա աշխատանքներին խորհրդակցական ձայնի իրավունքով կարող են մասնակցել Ընկերության Վերստուգող հանձնաժողովի անդամները:

9.12 Ընկերության Տնօրենների խորհրդի նիստի հրավիրման ժամկետները և տեղը որոշում է Տնօրենների խորհրդի նախագահը:

9.13 Տնօրենների խորհրդի քարտուղարը, Ընկերության Տնօրենների խորհրդի հրավիրման տեղի, ժամկետի մասին առնվազն 3(երեք) օր առաջ, առկա կապի միջոցներով տեղյակ է պահում Տնօրենների խորհրդի անդամներին:

9.14 Եթե Տնօրենների խորհրդի նախագահը գտնում է, որ բացառապես Տնօրենների խորհրդի իրավասությանը ենթակա քննարկվելիք հարցի առնչությամբ Տնօրենների խորհրդի նիստի հրավիրման անհրաժեշտություն չկա, ապա այն քննարկվում է հարցման միջոցով:

9.15 Ընկերության Տնօրենների խորհրդի նիստերը արձանագրվում են: Նիստի արձանագրությունը կազմվում է նիստի ավարտից 5 (հինգ) օրյա ժամկետում:

9.16 Նիստի արձանագրությունը ստորագրում են նիստին մասնակցող բոլոր անդամները, որոնք և պատասխանատվություն են կրում արձանագրությունում առկա տեղեկությունների հավաստիության համար:

9.17 Ընկերության Տնօրենների խորհրդի նիստերը գումարվում են առնվազն 3(երեք) ամիսը 1 (մեկ) անգամ:

10. ՀՈԳՎԱԾ. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԸ

10.1 Ընկերության տնօրենը.

10.1.1 Գործում է ելնելով Ընկերության շահերից,

10.1.2 Գործելով առանց լիազորագրի՝ իրականացնում է Ընկերության գործունեության անմիջական կազմակերպումն ու ղեկավարումը,

10.1.3 Տնօրինում է Ընկերության գույքը, այդ թվում ֆինանսական միջոցները,

10.1.4 Ընկերության անունից կնքում է գործարքներ: ՀՀ Օրենսդրությամբ սահմանված կարգով և կազմակերպության անունից ստորագրում է համաձայնագրեր և պայմանագրեր, ֆինանսական և հաշվապահական փաստաթղթեր և Ընկերության գործունեության առօրյա նամակագրություններ,

10.1.5 Բաժնետերերի ժողովի հաստատմանն է ներկայացնում ընկերության կողմից մատուցվող ծառայությունների սակագները և տարվա կտրվածքով՝ սակագնային քաղաքականությունը,

- 10.1.6 Ընկերության անունից Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա բանկերում բացում է Ընկերության հաշվարկային (այդ թվում նաև արտարժույթային) և այլ հաշիվներ,
- 10.1.7 Ներկայացնում է Ընկերությունը Հայաստանի Հանրապետությունում և արտերկրում,
- 10.1.8 Ընկերության անունից տալիս է լիազորագրեր,
- 10.1.9 Պատասխանատու է Ընկերության աշխատանքային ներքին կանոնակարգի, առանձնացված ստորաբաժանումների կանոնակարգերի, վարչակազմակերպական կառուցվածքի և հաստիքացուցակի նախապատրաստման և սահմանված կարգով Ընկերության Տնօրենների խորհրդի հաստատմանը ներկայացնելու համար,
- 10.1.10 Իր իրավասությունների սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, կատարման համար պարտադիր ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը,
- 10.1.11 Սահմանված կարգով աշխատանքի է ընդունում և ազատում Ընկերության աշխատակիցներին,
- 10.1.12 Ընկերության աշխատակիցների նկատմամբ կիրառում է խրախուսման և կարգապահական պատասխանատվության միջոցներ,
- 10.1.13 Իրականացնում է Օրենսդրությամբ նախատեսված այլ լիազորություններ և պարտականություններ, ինչպես նաև կրում պատասխանատվություն, այդ թվում՝ նյութական,
- 10.1.14 Հետևում է աշխատանքային կարգապահությանը՝ թույլ չտալով աշխատանքային ռեժիմի խախտումներ:

11. ՀՈԴՎԱԾ ՎԵՐՍՏՈՒԳՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ

- 11.1 Ընկերության ֆինանսատնտեսական գործունեության վերահսկողությունն իրականացնում է Վերստուգող հանձնաժողովը, որը կազմվում է առնվազն 3 (երեք) անդամից: Վերստուգող հանձնաժողովի կազմն ընտրվում է ԲԸԺ-ի կողմից՝ 3 (երեք) տարի ժամկետով: Վերստուգող հանձնաժողովի անդամ կարող են լինել Ընկերության կառավարման մարմիններում չընդգրկված ցանկացած գործունակ ֆիզիկական անձինք:
Վերստուգող հանձնաժողովի նախագահը և անդամները չեն կարող լինել Ընկերության աշխատակիցներ:
- 11.2 Վերստուգող հանձնաժողովի Նախագահը ընտրվում է Վերստուգող հանձնաժողովի անդամների ձայների պարզ մեծամասնությամբ:
- 11.3 Վերստուգող հանձնաժողովն իր իրավասությունների սահմաններում.

- 11.3.1 հսկողություն է սահմանում Ընկերության հաշվապահական հաշվառման և հաշվետվության վարման նկատմամբ,
 - 11.3.2 Ընկերության Բաժնետերերի ընդհանուր ժողովին հաշվետվություն է ներկայացնում Օրենսդրությանը Ընկերության գործունեության համապատասխանության մասին,
 - 11.3.3 եզրակացություններ է տալիս Ընկերության Տնօրենների խորհրդի ներկայացրած, ինչպես նաև սեփական նախաձեռնությամբ առաջադրված հարցերի վերաբերյալ,
 - 11.3.4 իրականացնում է ընկերության ֆինանսատնտեսական գործունեության արդյունքների ստուգում,
 - 11.3.5 իրականացնում է Օրենսդրությամբ նախատեսված այլ լիազորություններ:
- 11.4 Վերստուգող հանձնաժողովը Ընկերության ֆինանսատնտեսական գործունեության ստուգումների արդյունքների վերաբերյալ պատրաստում է եզրակացություններ, որոնք բովանդակում են.
- 11.4.1 Ընկերության ֆինանսատնտեսական գործունեության վերլուծությունը,
 - 11.4.2 Ընկերության հիմնադրամների կազմավորման և դրանց նպատակային օգտագործման վերլուծությունը,
 - 11.4.3 Ընկերության հաշվետվություններում և այլ ֆինանսական փաստաթղթերում բովանդակող տեղեկությունների հավաստիության հաստատումը,
 - 11.4.4 Ընկերության կառավարման մարմինների որոշումների, հաշվապահական հաշվառման վարման, ֆինանսական և այլ հաշվետվության Օրենսդրությանը համապատասխանության հաստատումը,
 - 11.4.5 ստուգման առանձնահատկությունների հետ կապված այլ տեղեկություններ:
- 11.5 Վերստուգող հանձնաժողովի նիստերը գումարվում են տարեկան առնվազն չորս անգամ: Արտահերթ նիստ կարող է հրավիրվել Ընկերության Տնօրենների խորհրդի կամ Վերստուգող հանձնաժողովի երկու անդամների պահանջով:
- 11.6 Վերստուգող հանձնաժողովը ստուգման արդյունքների վերաբերյալ եզրակացությունը ներկայացնում է Բաժնետերերի ընդհանուր ժողովին: Այն կազմում է տարեկան հաշվետվությունների և հաշվեկշիռների վերաբերյալ եզրակացություններ:
- Ընկերության տարեկան հաշվեկշռի հաստատման ժամանակ Վերստուգող հանձնաժողովի եզրակացությունը պարտադիր է:
- 11.7 Վերստուգման արդյունքներից ելնելով՝ Վերստուգող հանձնաժողովն իրավունք ունի առաջարկություն ներկայացնել Ընկերության Տնօրենների խորհրդին՝ արտահերթ ԲԸԺ հրավիրելու մասին:
- 11.8 Վերստուգող հանձնաժողովը ստուգումներն իրականացնում է

- 11.8.1 ԲԸԺ-ի հանձնարարությամբ,
- 11.8.2 սեփական նախաձեռնությամբ,
- 11.8.3 10 (տաս) տոկոս և ավելի ձայներ ունեցող բաժնետերերի պահանջով,
- 11.8.4 Ընկերության Տնօրենների խորհրդի հանձնարարությամբ,

Ստուգումները կատարվում են առնվազն տարեկան մեկ անգամ:

11.9 Առանց Վերստուգող հանձնաժողովի եզրակացությունների Բաժնետերերի ընդհանուր ժողովն իրավունք չունի հաստատել Ընկերության տարեկան հաշվեկշիռը:

12. ՀՈԴՎԱԾ. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ

12.1 Ընկերության ընդհանուր ռազմավարության, գործունեության և նրա հետագա զարգացման, ինչպես նաև տեղական և միջազգային հեղինակավոր ֆինանսական կառույցների միջև հետադարձ կապի ապահովման նպատակով Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովը կարող է ստեղծել Ընկերության Խորհրդատվական խորհուրդ:

12.2 Ընկերության Խորհրդատվական խորհուրդի նիստերը հրավիրվում են Ընկերության տնօրենների խորհրդի կողմից ոչ պակաս, քան տարեկան երկու անգամ:

12.3 Խորհրդատվական խորհրդի անդամները ընտրվում են ԲԸԺ-ի կողմից ձայների պարզ մեծամասնությամբ՝ Ընկերության Բաժնետերերի և/կամ Տնօրենների խորհրդի և/կամ Ընկերության տնօրենի ներկայացմամբ:

12.4 Խորհրդատվական խորհրդի գործունեությունը կարգավորվում է Ընկերության բաժնետերերի կողմից հաստատվող համապատասխան կանոնակարգի համաձայն, որտեղ կներառվեն նաև Խորհրդի ենթակայությունը, նրա անդամների թվաքանակը, որոշումների ընդունման կարգը, գործունեության էթիկայի և անկախության սկզբունքները:

13 ՀՈԴՎԱԾ. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԱՆԱՉԱՌ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ

13.1 Ընկերության անդամ բանկերի և վարկային կազմակերպությունների կազմից, նրանց միջև տվյալների փոխանակման որակական և ծավալային հարցերի քննարկման նպատակով Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովը կարող է ստեղծել Ընկերության Անաչառ գործունեության խորհուրդ:

13.2 Անաչառ գործունեության խորհրդի նիստերը հրավիրվում են Ընկերության տնօրենների խորհրդի կողմից ոչ պակաս, քան տարեկան երկու անգամ:

13.3 Անաչառ գործունեության խորհրդի անդամներ կարող են հանդիսանալ Ընկերության բոլոր այն, Բանկ կամ Վարկային կազմակերպություն, անդամ կազմակերպությունները, որոնք տվյալներ են փոխանակում Ընկերության համակարգերի միջոցով:

13.4 Անաչառ գործունեության խորհրդի գործունեությունը կարգավորվում է Ընկերության բաժնետերերի կողմից հաստատվող համապատասխան կանոնակարգի համաձայն, որտեղ կներառվեն նաև Խորհրդի ենթակայությունը, նրա անդամների թվաքանակը, որոշումների ընդունման կարգը, գործունեության էթիկայի և անկախության սկզբունքները:

14 ՀՈԴՎԱԾ . ՀԱՇՎԱՌՈՒՄԸ ԵՎ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ

14.1 Ընկերության ֆինանսական տարին սահմանվում է հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը: Հաշվապահական հաշվառումը և հաշվետվությունը Ընկերությունում տարվում է Օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում:

14.2 Ընկերության գործունեության արդյունքներն արտացոլվում են տարեկան հաշվեկշռում, տարեկան ֆինանսական արդյունքների վերաբերյալ հաշվետվություններում, ինչպես նաև եռամսյակային և տարեկան այլ հաշվետվությունների մեջ:

14.3 Ընկերության ֆինանսատնտեսական գործունեության ստուգման նպատակով Ընկերությունը կարող է ներգրավել աուդիտն իրականացնող անձի՝ աուդիտորի (կազմակերպության կամ ֆիզիկական անձի), որը գույքային շահերով կապված չէ Ընկերության կամ նրա բաժնետերերի հետ, կնքելով նրա հետ համապատասխան պայմանագիր:

14.4 Ընկերությունը ինտերնետում՝ ընկերության տնային էջում, մշտապես հրապարակում է՝

14.4.1 տարեկան ֆինանսական հաշվետվությունները և հաշվետվությունների վերաբերյալ արտաքին աուդիտի եզրակացության պատճենը,

14.4.2 օրենքով սահմանված ժամկետում՝ տարեկան ընդհանուր ժողովի գումարման մասին հայտարարությունը,

14.4.3 շահութաբաժիններ վճարելու մասին որոշումների պատճենները, ինչպես նաև ընկերության շահութաբաժնային քաղաքականությունը սահմանող ակտերի պատճենները՝ առկայության դեպքում,

14.4.4 Ընկերության խորհրդի, գործադիր մարմնի անդամների ցանկը և անձնական տվյալները՝ նրանց անունը, ծննդյան ամսաթիվը և այլ տվյալներ,

14.4.5 Ընկերությունը ինտերնետում՝ տնային էջում և առանձին գրքույկի կամ հասարակության համար հասանելի այլ ձևով հրապարակում է իր գործունեության հիմնական սկզբունքները, իր հաճախորդների իրավասությունները:

14.5 Ընկերությունը պարտավոր է նաև ցանկացած անձի պահանջով նրան տրամադրել՝

14.5.1 Ընկերության պետական գրանցման վկայականի և Ընկերության կանոնադրության պատճենները,

14.5.2 Նախորդ կետում նշված տեղեկությունների տրամադրման համար գանձվող վճարը չի կարող ավելի լինել դրանց պատրաստման և (կամ) փոստային առաքման համար արված փաստացի ծախսերից:

14.6 Ընկերության յուրաքանչյուր բաժնետեր իրավունք ունի անվճար ստանալու ընկերության վերջին տարեկան հաշվետվության և արտաքին աուդիտի եզրակացության պատճենները:

14.7 Ընկերության տեղաբաշխված քվեարկող բաժնետոմսերի (բաժնեմասերի, փայերի) 1%-ին և ավելիին տիրապետող յուրաքանչյուր բաժնետիրոջ (բաժնետերերի) պահանջով ընկերությունը նրան պետք է անվճար տրամադրի հետևյալ տեղեկությունները՝

14.7.1 Ընկերության խորհրդի, տնօրենի և գլխավոր հաշվապահի վերաբերյալ տեղեկությունները,

14.7.2 Ընկերության խորհրդի անդամների, տնօրենի և գլխավոր հաշվապահի՝ նախորդ տարվա ընթացքում Ընկերությունից ստացված ամբողջ վարձատրության (ներառյալ՝ պարգևատրումների, ընկերության համար որոշակի աշխատանք կատարելու դիմաց վճարների, աշխատավարձին հավասարեցված այլ եկամուտների) չափը,

14.7.3 Ընդհանուր ժողովի և կառավարման այլ մարմինների հաստատած ներքին ակտերի, Ընկերության առանձնացված ստորաբաժանումների և հիմնարկների կանոնադրությունների, Ընկերության կողմից պետական կառավարման մարմիններին ներկայացվող ֆինանսական ու վիճակագրական հաշվետվությունների, ընդհանուր ժողովի, խորհրդի, տնօրինության նիստերի արձանագրությունների, Ընկերության կողմից Ընկերության և (կամ) Ընկերության ղեկավարի նկատմամբ կիրառված պատժամիջոցների վերաբերյալ Ընկերության որոշումների պատճենները, ներքին աուդիտի ղեկավարի կողմից խորհրդին և տնօրենին ներկայացված հաշվետվությունների պատճենները:

14.8 Ընկերության բաժնետիրոջ ստացած տեղեկությունները նրա կողմից չեն կարող փոխանցվել այլ անձանց, ինչպես նաև դրանք չեն կարող օգտագործվել Ընկերության գործարար համբավը արատավորելու, Ընկերության բաժնետերերի կամ հաճախորդների իրավունքներն ու օրինական շահերը խախտելու կամ նմանատիպ այլ նպատակներով: Հակառակ դեպքում նրանք ենթակա են պատասխանատվության՝ Հայաստանի

Հանրապետության օրենքներով եւ նորմատիվ իրավական այլ ակտերով սահմանված կարգով:

14.9 Ընկերության խորհրդի անդամների, տնօրենի, գլխավոր հաշվապահի վերաբերյալ, ինչպես նաև խորհրդի անդամների թեկնածուների վերաբերյալ Ընկերության բաժնետերերին բացահայտվող տեղեկատվությունը պետք է ներառի նաև՝

14.9.1 նրանց ազգանունը, անունը, ծննդյան տարին, ամիսը, ամսաթիվը,

14.9.2 մասնագիտությունը և կրթությունը,

14.9.3 վերջին 10 տարվա ընթացքում զբաղեցրած պաշտոնները,

14.9.4 տվյալ պաշտոնում ընտրվելու, նշանակվելու տարին, ամիսը, ամսաթիվը և պաշտոնից ազատվելու տարին, ամիսը, ամսաթիվը,

14.9.5 տվյալ պաշտոնում վերընտրվելու քանակը,

14.9.6 Ընկերության բաժնետեր հանդիսացող խորհրդի անդամին, տնօրենին, գլխավոր հաշվապահին կամ խորհրդի անդամի թեկնածուին և նրանց հետ փոխկապակցված անձանց պատկանող՝ Ընկերության քվեարկող բաժնետոմսերի (բաժնեմասերի, փայերի) քանակը:

14.10 Ընկերության կողմից հրապարակվող կամ տրամադրվող տեղեկությունները պետք է լինեն ամբողջական և արժանահավատ:

15 ՀՈԴՎԱԾ . ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

15.1 Ընկերության վերակազմակերպումը Ընկերության բաժանումը կամ առանձնացումն է, միաձուլումը կամ միացումը մեկ այլ ընկերության հետ, վերակազմավորումը այլ կազմակերպաիրավական տեսակի՝ առանց լուծարման ընթացակարգ անցնելու:

15.2 Ընկերության վերակազմակերպումը կատարվում է Բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշմամբ, ինչպես նաև Օրենսդրությամբ սահմանված դեպքերում:

16 ՀՈԴՎԱԾ . ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԼՈՒԾԱՐՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ ԵՎ ԿԱՐԳԸ

16.1 Ընկերության լուծարումը իրականացվում է Օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում:

16.2 Ընկերության լուծարման գործընթացը իրականացվում է Լուծարման հանձնաժողովի կողմից: Ընկերության լուծարման դեպքում Լուծարման հանձնաժողովի անդամներին նշանակում է Ընկերության Բաժնետերերի ընդհանուր ժողովը, իսկ հարկադրական լուծարման դեպքում՝ Օրենսդրությամբ սահմանված կարգով:

16.3 Լուծարման հանձնաժողովի անդամներն իրենց գործունեության ընթացքում թույլ տրված խախտումների և իրենց գործողություններով պատճառված վնասի համար պատասխանատվություն են կրում Օրենսդրությամբ սահմանված կարգով:

16.4 Լուծարման հանձնաժողով նշանակելու պահից նրան են անցնում Ընկերության գործերի կառավարման լիազորությունները:

16.5 Լուծարման հանձնաժողով ստեղծելուց հետո 3 (երեք) օրվա ընթացքում Ընկերությունը հայտարարություն է տալիս մամուլում Ընկերության լուծարման և պարտատերերի կողմից պահանջների ներկայացման կարգի և ժամկետների մասին:

16.6 Լուծարման հանձնաժողովը իր նշանակումից հետո երկշաբաթյա ժամկետում.

16.6.1 հաշվեգրում և գնահատում է Ընկերության ակտիվներն ու պարտավորությունները,

16.6.2 հայտնաբերում է Ընկերության պարտապաններին և սահմանում է Ընկերության դեբիտորական պարտքերի վերադարձնելու կարգը,

16.6.3 միջոցներ է ձեռնարկում Ընկերության ակտիվներն առավել շահավետ իրացնելու համար,

16.6.4 միջոցներ է ձեռնարկում Ընկերության նկատմամբ առկա պարտավորությունների ապահովման ուղղությամբ,

16.6.5 որոշում է Ընկերության պարտավորությունների կատարումից հետո մնացած միջոցները բաժնետերերի միջև բաշխելու կարգը՝ Ընկերության Կանոնադրական կապիտալում նրանց ունեցած բաժնեմասերին համապատասխան:

16.7 Ընկերության լուծարման մասին իրավաբանական անձանց պետական ռեգիստրում համապատասխան գրառում է կատարվում: